

48 Ի ճանապարհին նախ բնկերանայ
Ընդ Աբրահամու բաբելոյն գերակայ,
Որ ծննդեամբն էր ի կղզւոյն Կրետեայ
Գէտ Ռեգեստոնի յաշխարհին Թրակեայ:

49 Որում Յօհաննէս համաշաւիղ տայր
Ջաշակերտն իւր՝ զոր առեալ չքայր
Մինչեւ ի Կարին՝ ուր Սարգիս մընայր,
Ի՛ ինքն Եւջիածին ուղղորդ յուխա զընայր:

50 Սարգիս ի Կարին ամսօք յամենայր,
Յարգեալ ի Հայոց տեղւոյն անդադար,
Որ անտի ապա շըւեալ ընթանայր,
Հասանէր յաթոռ Լուսաւորչարար:

Ե Ր Գ Ե Ր Ր Ո Ր Գ

Որով ցոյցանի Սարգոի մեր պայծառ,
Փոյթ Եպիսկոպոս օրհնին ի տաճար,
Սարբ Եւջիածնի յաւեա հրաշափառ,
Եւ հովուութիւնն սճիւ յոյժ յարմար:

1 Իսկ արդ Սարգիս ժաման լինի
Յառաջին գահ Հայոց մեծի,
Յաւուրս տեղւոյն Հայրապետի
Աբրահամու որ Մըշեցի:

2 Այս ինչ լինէր յաշնան միջի
Ի թուականի մերում փրկչի
Հազար եւ եօթն հարիւրորդի
Երեսներորդ եւ չորրորդի

1734

3 Ուր նա եղիտ խօթ ի մահճի
Կաթողիկոսն զոր յիշեցի,
Որ փոքրօրեայ պահու ըզկնի
Առ հանդերձեալն անդրափոխի: